ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է "2025Թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ" ՄՐՑՈՒՅԹԻ

16-ՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆԸ

"ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ" անվանակարգում հայտարարված մրցույթը երկար տարիների փորձ ունի: Այն մեր հանրապետությունում միակ մրցույթն է, որը մեկնարկել է դեռևս 2005թ.-ից և ունի արդեն ավելի քան 20 տարվա կեսագրություն: Մրցույթն իրավամբ համարվում է "ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավաիչ", որովհետև նրան մասնակցում կամ կարող են մասնակցել մեր երկրի բոլոր տարածաշրջանների կադրային քաղաքականությամբ զբաղվող մասնագետները, իրավաբանները, ուսանողներ, որոնք հետաքրքված են աշխատանքային իրավունքով և HR-ով: Մասնակիցների մեջ քիչ չեն հաշվապահները: Հետաքրքիրն այն է, որ մրցույթին երբեմն մասնակցում են նաև գործատուները և որքան էլ զարմանալի լինի՝ դատավորները:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

Այսուհետ մրցույթին ներկայացված առաջադրանքներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների նկարները, անունը, ազգանունը կտեղադրվեն ամսագրում՝ առանց նշելու հավաքած միավորների թիվը: Մյուս մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը կտեղադրվի www.gortsq.am կայքէջի համապատասխան խորագրի ներքո:

"2025Թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ" ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ

Ի ՓՈՒԼ

Մեկնարկում է "2025թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավաիչ" անվանակարգում հայտարարված մրցույթի 16-րդ պարբերաշրջանի ընտրական 1-ին փուլը, որին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ "Հակասություններ և բացահայտումներ" ու "Գրագիտություն և իրազեկվածություն" թեմաներից, ինչպես նաև հոգեմտածողությանը վերաբերող առաջադրանքից:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

"Հակասություններ և/կամ բացահայտումներ" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 3 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

"Գրագիտություն և իրազեկվածություն" առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը կգնահատվի 0.25 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 11 միավոր):

"Հոգեմտածողություն" առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը կգնահատվի 1 միավոր սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 2 միավոր)

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 36 միավոր:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների անունը, ազգանունը կտպագրվի ամսագրի հաջորդ համարում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2025թ. ապրիլի 27-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2025թ. ապրիլի 28-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ միջազգային խորհրդանիշով ոսկեզոր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

"2025Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. **Աշխատանքային վեճը առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝**

   ա) երկու ամսվա ընթացքում.

   <u>բ) երեք ամսվա ընթացքում.</u>

   գ) ժամկետը կախված է գործի քննության ընթացքից:

2. **Գործատուի անհատական իրավական ակտն ընդունվել է անհատական իրավական ակտերին վերաբերող օրենքով սահմանված պահանջների խախտմամբ: Այն հի՞մք է այդ ակտն անվավեր ճանաչելու համար (գտնել սխալ պատասխանները)՝**

   <u>ա) անհատական իրավական ակտերին վերաբերող օրենքով սահմանված պահանջների խախտումը հիմք է իրավական ակտն անվավեր ճանաչելու համար.</u>

բ) անհատական իրավական ակտերին վերաբերող օրենքով սահմանված պահանջների խախտումը հիմք չէ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար.

գ) "ա" պատասխանը ճիշտ է, "բ" պատասխանը՝ սխալ։

3. Աշխատողը աշխատանքի է ներկայացել 8 ժամյա աշխատանքային օրվա կեսից: Բացակայության յուրաքանչյուր ժամը կարելի՞ է համարել կարգապահական խախտում, եթե ներքին կարգապահական կանոններում սահմանվել է, որ աշխատանքից մեկ ժամ բացակայությունը ենթակա է կարգապահական տույժի՝

ա) քանի որ ներքին կարգապահական կանոններում սահմանվել է, որ աշխատանքից մեկ ժամ բացակայությունը ենթակա է կարգապահական տույժի, իսկ աշխատողը փաստացի ուշացել է աշխատանքից 4 ժամ, հետևաբար յուրաքանչյուր ուշացած ժամի համար պետք է կիրառել մեկ կարգապահական տույժ.

բ) կողմերի համաձայնությամբ կարգապահական տույժ չի կիրառվում.

գ) կիրառվում է մեկ կարգապահական տույժ։

4. Մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի պաշտոնավարման կասեցման ընթացքում աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրացել է: Գործատուն իրավունք ունի՞ լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով՝

ա) իրավունք ունի.

բ) իրավունք չունի, քանի դեռ չի ընդունվել համապատասխան դատական ակտ.

գ) իրավունք կունենա միայն այն դեպքում, երբ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով աշխատողին ազատ են արձակել ռեաբիլիտացնող հիմքով կամ դատապարել են ազատազրկման։

5. Անհատ ձեռնարկատերը դիմել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական հաշվառումից դուրս գալու համար: Անհատ ձեռնարկատեր հաշվառված անձը համարվում է պետական հաշվառումից հանված՝

ա) դիմումը ներկայացնելու պահից.

բ) դիմումը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում.

գ) դիմումը ներկայացնելուց հետո հարկային մարմնի կողմից համալիր հարկային ստուգում անցնելուն հաջորդող օրը։

"2025Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ I ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Աշխատողը աշխատանքի ընթացքում իր գործողություններով 1200000 դրամի չափով վնաս է պատճառել գործատուին, որը որակվել է որպես այնպիսի զանցանք, որով աշխատողը պետք է փոխհատուցի գործատուին իր աշխատավարձի՝ 100 000 դրամի եռապատիկի չափով և կատարի ամենամսյա վճարումներ ոչ ավելի քան ամսական աշխատավաձի 50% -ի չափով, այսինքն 50 000 դրամ: Աշխատողը մեկ ամիս աշխատելուց հետո ազատվել է աշխատանքից իր նախաձեռնությամբ՝ այդ մասին 30 օր առաջ տեղեկացնելով գործատուին: Աշխատանքից ազատման օրը գործատուի հրամանով գլխավոր հաշվապահը վերջնահաշվարկի գումարից կատարել է պահում՝ աշխատողի կողմից գործատուին պատճառած վնասն ամբողջ ծավալով 1150 000 (1200000 – 50 000) դրամի չափով, հաշվի առնելով աշխատողի տվյալ ամսվա համար վճարվելիք գումարը:

Աշխատողը գործատուից պահանջել է կատարել վերահաշվարկ և պահպանելով ամսական աշխատավարձի 50% -ից (50 000 դրամից) ոչ ավելի չափով պահումներ կատարելու օրենսդրության պահանջը վերջնահաշվարկից կատարել պահում՝ ընդամենը 50 000 դրամի չափով, խոստանալով, որ մնացած գումարը կվճարի հաջորդ ամիսների ընթացքում: Գործատուն մերժել է աշխատողի պահանջը, պատճառաբանելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածում սահմանված երեք ամսվա աշխատավարձի չափով վնասի փոխհատուցման պահանջը վերաբերում է միայն աշխատողին, իսկ քանի որ աշխատանքից ազատվողը այլևս իր աշխատողը չէ, հետևաբար վերջնահաշվարկից կատարել է պահումներ՝ տվյալ անձի կողմից իրեն (գործատուին) պատճառած վնասն ամբողջությամբ:

Աշխատողը հայցով դիմել է դատարան և պահանջել, չեղյալ համարել գործատուի հրամանը և պարտադրել գործատուին վաճարել իրեն հասանելիք վերջնահաշվարկի գումարն ամբողջությամբ՝ դրանից հանելով միայն վնասի փոխհատուցման տվյալ ամսվա համար սահմանված գումարը՝ 50 000 դրամը, խոստանալով, որ մնացած գումարը՝ կվճարի հաջորդ ամիսների ընթացքում:

Դուք եք դատավորը: Ի՞նչ որոշում կկայացնեք:

Պատասխան – Հայցը պետք է բավարարել մասնակի: Դատավորը գործատուի իրավական ակտը ոչ թե չեղյալ պետք է համարի, այլ ճանաչի անվավեր և աշխատողին պարտադրի, որ գործատուին վճարի յուրաքանչյուր ամիս 50 000 դրամից ոչ պակաս չափով, մինչև ընդհանուր հաշվով 300 000 դրամի լրիվ մարումը, քանի որ 300 000 դրամի վնասի փոխհատուցման

պարտավորությունն առաջացել է գործատուի որոշմամբ՝ անձի աշխատելու ընթացքում և այն հետագայում փոփոխման ենթակա չէ:

"2025Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ" ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ "ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ"

"Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների[1] դեպքում, կիրառվում է ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի առանձին մասեր հակասում են "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի առանձին դրույթներին:

Անհրաժեշտ է բացահայտել հակասությունը և առաջարկել համապատասխան լուծում:

Պատասխան

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասինե ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ, կամ համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից: Ներքին իրավական ակտը հրապարակվում է ընդունող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում տեղադրելու միջոցով, իսկ եթե ընդունող մարմինը չունի պաշտոնական ինտերնետային կայքէջ, ապա այն անձանց համար տեսանելի և հասանելի վայրում տեղադրելով, որոնց ուղղված է այդ ակտը: Ընդունող մարմինը պարտավոր է նշել ակտի հրապարակման օրը: Ընդունող մարմինը պարտավոր է հրապարակել նաև ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո ակտի ինկորպորացված տարբերակը:

[1] Երկու կամ ավելի ֆորմալ գործող օրենքների էության տարակարծություն, որոնք հրապարակվել են միևնույն հարցի վերաբերյալ

Ինչպես նկատելի է գործատուի կողմից ընդունված ներքին իրավական ակտերն ուժի մեջ մտնելու կանոնակարգումները հակասում են «Նորմատիվ իրավական ակտերի մասինե ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումներին, ըստ որի՝ սույն օրենքը կարգավորում է նորմատիվ իրավական ակտի հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորձաքննության, ներառյալ մոտարկման համապատասխանության որոշման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, լրացման և գործողության դադարեցման, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները և օրենսդրական տեխնիկայի կանոնները, իսկ 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում:

Այսպսով անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդվ մասը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասինե ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասին:

"2025Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ

"ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ"

Ստորև նշվածներից, որ արտահայտությունն է գրվում մեծատառով և որը՝ փոքրատառով:

ԳՏՆԵԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԳՐԵԼԱՁԵՎԸ

(Ընտրել նշվածներից որև է մեկը՝ դնելով (V) նշանը)

1.	Սահմանադրություն ☐ սահմանադրություն ☐	12.	Վերաքննիչ Դատարան ☐ Վերաքննիչ դատարան ☐ վերաքննիչ դատարան ☐
2.	Հանրապետության Նախագահ ☐ Հանրապետության նախագահ ☐ հանրապետության նախագահ ☐	13.	Ընտրատարածքային Ընտրական Հանձնաժողով ☐ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ☐ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ☐

3.	Ամենայն Հայոց Կաթողիկոս ☐ Ամենայն հայոց կաթողիկոս ☐ ամենայն հայոց կաթողիկոս ☐	14.	Կենտրոնական Բանկ ☐ Կենտրոնական բանկ ☐ կենտրոնական բանկ ☐
4.	Վարչապետ ☐ վարչապետ ☐	15.	Գլխավոր Դատախազ ☐ Գլխավոր դատախազ ☐ գլխավոր դատախազ ☐
5.	Փոխվարչապետ ☐ փոխվարչապետ ☐	16.	Գլխավոր Դատախազություն ☐ Գլխավոր դատախազություն ☐ գլխավոր դատախազություն ☐
6.	Ազգային Ժողով ☐ ազգային ժողով ☐ ազգային Ժողով ☐	17.	Առաջին Ատյանի Ընդհանուր Իրավասության Դատարան ☐ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ☐ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ☐
7.	Պատգամավոր ☐ պատգամավոր ☐	18.	Բարձրագույն Դատական Խորհուրդ ☐ Բարձրագույն դատական խորհուրդ ☐ բարձրագույն դատական խորհուրդ ☐
8.	Կառավարություն ☐ կառավարություն ☐	19.	ՀՀ Արդարադատության Նախարարություն ☐ ՀՀ Արդարադատության նախարարություն ☐ ՀՀ արդարադատության նախարարություն ☐
9.	Նախարար ☐ նախարար ☐	20.	Վճռաբեկ դատարան ☐ վճռաբեկ դատարան ☐
10.	Մարզպետ ☐ մարզպետ ☐	21.	Քննչական Կոմիտե ☐ Քննչական կոմիտե ☐ քննչական կոմիտե ☐
11.	Պետական Մարմին ☐ Պետական մարմին ☐ պետական մարմին ☐	22.	Ազգային Անվտանգության Ծառայություն ☐ Ազգային անվտանգության ծառայություն ☐ ազգային անվտանգության ծառայություն ☐
23.	Հաշվեքննիչ Պալատի Նախագահ ☐ Հաշվեքննիչ Պալատի նախագահ ☐ Հաշվեքննիչ պալատի նախագահ ☐ հաշվեքննիչ պալատի նախագահ ☐	34.	Պետական Եկամուտների Կոմիտե ☐ Պետական եկամուտների կոմիտե ☐ պետական եկամուտների կոմիտե ☐
24.	Տեղական Ինքնակառավարման Մարմին ☐ Տեղական ինքնակառավարման մարմին ☐ տեղական ինքնակառավարման մարմին ☐	35.	Վիճակագրական Կոմիտեի ղեկավար ☐ Վիճակագրական կոմիտեի ղեկավար ☐ վիճակագրական կոմիտեի ղեկավար ☐
25.	Մարդու Իրավունքների Պաշտպան ☐ Մարդու իրավունքների պաշտպան ☐ մարդու իրավունքների պաշտպան ☐	36.	Սահմանադրության Օր ☐ Սահմանադրության օր ☐ սահմանադրության օր ☐

26.	Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան ☐ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ☐ մարդու իրավունքների եվրոպական դատարան ☐	37.	(Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) Մատենադարան ☐ (Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) մատենադարան ☐
27.	Սահմանադրական Դատարան ☐ Սահմանադրական դատարան ☐ սահմանադրական դատարան ☐	38.	ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա ☐ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ☐ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա ☐
28.	Սահմանադրական օրենք ☐ Սահմանադրական օրենք ☐ սահմանադրական օրենք ☐	39.	Պետական Համալսարան ☐ Պետական համալսարան ☐ պետական համալսարան ☐
29.	Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով ☐ Կենտրոնական Ընտրական հանձնաժողով ☐ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ☐ կենտրոնական ընտրական հանձնաժողով ☐	40.	Սուրբ Մեսրոպ Մաշտոցի Շքանշան ☐ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան ☐ սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան ☐
30.	Բարձրագույն Դատական Խորհուրդ ☐ Բարձրագույն դատական խորհուրդ ☐ բարձրագույն դատական խորհուրդ ☐	41.	Անկախության Օր ☐ Անկախության օր ☐ անկախության օր ☐
31.	Գլխավոր Դատախազություն ☐ Գլխավոր դատախազություն ☐ գլխավոր դատախազություն ☐	42.	Նոր Տարի կամ Ամանոր ☐ Նոր տարի կամ Ամանոր ☐ նոր տարի կամ ամանոր ☐
32.	Հանրաքվե ☐ հանրաքվե ☐	43.	Ապրիլի Յոթ (Մայրության և Գեղեցկության տոն) ☐ Ապրիլի յոթ (Մայրության և գեղեցկության տոն) ☐ ապրիլի յոթ (մայրության և գեղեցկության տոն) ☐
33.	Հայաստանի Ազգային Հերոս ☐ Հայաստանի ազգային Հերոս ☐ Հայաստանի ազգային հերոս ☐	44	Մարտի Ութ (Կանանց Միջազգային օր) ☐ Մարտի ութ (Կանանց միջազգային օր) ☐ մարտի ութ (կանանց միջազգային օր) ☐

ԳՏՆԵԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԳՐԵԼԱՁԵՎԸ

(ստորև նշված արտահայտությունները գրվում են մեծատառով, թե՞ փոքրատառով)

սահմանադրություն	[redacted]
հանրապետության նախագահ	[redacted]

ամենայն հայոց կաթողիկոս	[redacted]
վարչապետ	[redacted]
փոխվարչապետ	[redacted]
ազգային ժողով	[redacted]
պատգամավոր	[redacted]
կառավարություն	[redacted]
նախարար	[redacted]
մարզպետ	[redacted]
պետական մարմին	[redacted]
հաշվեքննիչ պալատի նախագահ	[redacted]
տեղական ինքնակառավարման մարմին	[redacted]
մարդու իրավունքների պաշտպան	[redacted]
մարդու իրավունքների եվրոպական դատարան	[redacted]
սահմանադրական դատարան	[redacted]
սահմանադրական օրենք	[redacted]
վճռաբեկ դատարան	[redacted]
վերաքննիչ դատարան	[redacted]
առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	[redacted]
հանրաքվե	[redacted]
բարձրագույն դատական խորհուրդ	[redacted]
կենտրոնական ընտրական հանձնաժողով	[redacted]
տարածքային ընտրական հանձնաժողով	[redacted]
կենտրոնական բանկ	[redacted]
գլխավոր դատախազ	[redacted]
գլխավոր դատախազություն	[redacted]
ՀՀ արդարադատության նախարարություն	[redacted]
վիճակագրական կոմիտեի ղեկավար	[redacted]
քննչական կոմիտե	[redacted]
ազգային անվտանգության ծառայություն	[redacted]
պետական եկամուտների կոմիտե	[redacted]

պետական համալսարան	[redacted]
(Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) մատենադարան	[redacted]
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	[redacted]
Հայաստանի ազգային հերոս	[redacted]
հերոսուհի մայր	[redacted]
սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան	[redacted]
ապրիլի յոթ (մայրության և գեղեցկության տոն)	[redacted]
մարտի ութ (կանանց միջազգային օր)	[redacted]
նոր տարի կամ ամանոր	[redacted]
անկախության օր	[redacted]
սահմանադրության օր	[redacted]

Հիմքը ՝

1. Լեզվի կոմիտեի կողմից իմ հարցմանը տրված *2024թ. փետրվարի 2-ի* պարզաբանումը

"2025Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ I ՓՈՒԼԻ

ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Հարց

Գործդ բռնեցիր բարեկամիդ հետ՝ . . . ,

Գործդ բռնեցիր անծանոթի հետ՝ . . . :

Պատասխան

Գործդ բռնեցիր բարեկամիդ հետ՝ կթշնամանաս,

Գործդ բռնեցիր անծանոթի հետ՝ կբարեկամանաս :